

## Ատելության հիմքով հանցագործություններ և ատելության քարոզում

### Ատելության քարոզում

Կարևոր է իմանալ, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև գոյություն չունի համընդհանուր կերպով ընդունված սահմանում ատելության քարոզում արտահայտության համար: Այնուամենայնիվ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի [թիվ 97\(20\) հանձնարարականը](#) «ատելության քարոզումը» սահմանում է հետևյալ կերպ՝

*« «Ատելության քարոզում» եզրույթը պետք է հասկանալ, որպես արտահայտման բոլոր ձևերն ընդգրկող երևույթ, որը տարածում է, հրահրում է, խրախուսում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, այլատյացությունը, անտիսեմիտիզմը և ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, այդ թվում՝ ազրեսիվ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների և գաղթական ծագման անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը»:*

Այս առումով, ատելության քարոզումը ներառում է այն դիտողությունները, որոնք ուղղակիորեն ուղղված են անձի կամ անձանց որոշակի խմբի:

ՄԻԵԴ-ը [Ատելության քարոզման համառոտ տեղեկանքում](#) նշում է.

*«Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հեղինակները փորձել են ստեղծել ժողովրդավարական արժեքների վրա հիմնված մի ինստիտուցիոնալ շրջանակ ծայրահեղականությունները հաղթահարելու համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնաբերել է արտահայտման մի շարք ձևեր, որոնք համարվում են վիրավորական և Կոնվենցիային հակասող (այդ թվում՝ ռասիզմը, այլատյացությունը, անտիսեմիտիզմը, ազրեսիվ ազգայնականությունը և փոքրամասնությունների և ներգաղթյալների նկատմամբ խտրականությունը):*

*Այնուամենայնիվ, Դատարանն իր եզրակացություններում զգուշությամբ է տարբերակում մի կողմից ծայրահեղականության իրական և լուրջ հրահրումը, և մյուս կողմից անձանց (այդ թվում՝ լրագրողների և քաղաքական գործիչների) իրենց տեսակետներն ազատ արտահայտելու իրավունքի և մյուսներին «վիրավորելու, շփոթեցնելու և վրդովեցնելու» միջև (տե՛ս, [Handyside v. the United Kingdom](#) (դիմում թիվ 5493/72) (1976թ. դեկտեմբերի 7, կետ. 49)*

Գոյություն չունի «ատելության քարոզման» համընդհանուր ընդունված սահմանում: Դատարանի նախադեպային իրավունքը սահմանել է մի քանի պարամետրեր, որոնք թույլ են տալիս բնութագրել «ատելության քարոզումը», որպեսզի այն բացառվի խոսքի ազատության իրավունքով (Կոնվենցիայի 10-րդ հոդված) կամ միավորումների և հավաքների ազատության իրավունքով (11-րդ հոդված) երաշխավորված պաշտպանությունից:

Դատարանը ատելության քարոզումը պաշտպանությունից բացառում է Կոնվենցիայով նախատեսված երկու մոտեցման միջոցով՝

(ա) կիրառելով Կոնվենցիայի 17-րդ հոդվածը (իրավունքների չարաշահման արգելում), որով տվյալ մեկնաբանությունները համարվում են ատելության քարոզում և ժխտում են Կոնվենցիայի հիմնարար արժեքները, կամ

(բ) կիրառելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ մասով և 11-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները (այս մոտեցումը կիրառվում է այն ժամանակ, երբ վիճահարույց խոսքը, թեև այլ ատելության քարոզում է, չի կարող կործարար լինել Կոնվենցիայի հիմնարար արժեքների համար)»:

## **Ատելության հիմքով հանցագործություններ**

«Ատելության հիմքով հանցագործությունները», ինչպես սահմանված են [ԵԱՀԿ նախարարական խորհրդի «Ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ» թիվ 9/09 որոշմամբ](#) (Աթենք, 2009թ. դեկտեմբերի 2), «կանխակալությամբ կատարված քրեական հանցագործություններ են»:

Ինչպես կարող ենք տեսնել, ատելության հիմքով հանցագործությունները հանցագործության այլ տեսակներից տարբերվում են հանցագործի դրդապատճառներով:

Որպեսզի քրեական գործողությունն որակվի ատելության հիմքով հանցագործություն, պետք է համապատասխանի այս երկու չափանիշներին՝

- գործողությունը պետք է հանցագործություն համարվի այն երկրի քրեական օրենսգրքով, որտեղ, որ այն կատարվել է,
- հանցագործությունը պետք է իրականացված լինի կանխակալ դրդապատճառներով:

«Կանխակալ դրդապատճառ» նշանակում է, որ հանցագործը հանցագործության

թիրախն ընտրում է որոշակի հատկանիշներով պայմանավորված: Ատելության հիմքով հանցագործության թիրախը կարող է լինել անձը, ժողովուրդը կամ մեկ կամ ավելի ընդհանուր հատկանիշներ ունեցող խմբի հետ կապված գույքը: Ատելության հիմքով հանցագործությունը կարող է արտահայտվել ահաբեկման, սպառնալիքների, գույքային վնասի, հարձակման, սպանության կամ ցանկացած այլ քրեական հանցագործության ձևով: Կանխակալությունը հանցագործությունը դարձնում է ավելի ծանրացուցիչ, քանի որ անմիջական գոհի նկատմամբ հանցագործություն կատարելով, հանցագործը ուղերձ է հղում նույն հատկանիշներն ունեցող անձանց խմբին:

Ինչպես արդարացիորեն նշվում է ԵԱՀԿ «Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքի ուղեցույցում»,

*«ատելության հիմքով հանցագործություններն անհանդուրժողականության բռնի դրսևորումներ են և խորապես ազդում են ոչ միայն անմիջական գոհի, այլ նաև այն խմբի վրա, որի հետ գոհն ինքն իրեն նույնականացնում էր»: «Որևէ անձի ինքնությունը թիրախ դարձնելով՝ ատելության հիմքով հանցագործություններն ավելի մեծ վնաս են պատճառում, քան սովորական հանցագործությունները: Անմիջական գոհը կարող է ստանալ մեծ հոգեբանական վնասվածքներ և խոցելիության ավելի մեծ զգացում, քանի որ նա չի կարող փոխել այն հատկանիշը, որը նրան գոհ է դարձրել: Ատելության հիմքով հանցագործություններն ավելի խորը հոգեբանական ազդեցություն ունեն գոհերի վրա՝ առաջացնելով ընկճախտի և տազնապի զգացումներ:*

(տե՛ս, [Hate Crime Laws: A Practical Guide](#) Հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺԻՄԻԳ) կողմից [www.osce.org/odihr](http://www.osce.org/odihr))

ԵԱՀԿ ուղեցույցը տարբերակում է կատարում ատելության հիմքով հանցագործությունների, ատելության քարոզման և ոչ բռնի խտրականության միջև: Ընդհանուր առմամբ, ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքները չեն ներառում պատիժներ խտրականության համար, քանի որ չկա քրեական հիմքով հանցանք, այսպիսով, ատելության հիմքով հանցագործության առաջին կարևոր տարրը բացակայում է: Այնուամենայնիվ, որոշ իրավագործություններ քրեականացրել են քարոզումն իր հատուկ բովանդակության պատճառով (օրինակ՝ ատելության հրահրումը, Հոլոքոստի ժխտումը կամ նացիստական գաղափարախոսության փառաբանումը):

Ատելության հիմքով հանցագործությունների լրջությունը և անդամ պետությունների կողմից դրանք կանգնեցնելուն ուղղված գործողությունների ձեռնարկման պարտականությունն ընդգծվել է ՄԻԵԴ-ի կողմից: Մեծ պալատի *Նաչովան ընդդեմ Բուլղարիայի* [*Nachova v. Bulgaria*] գործով կայացրած վճռում, Դատարանը, օրինակ, ընդգծել է ռասայական դրդապատճառներով իրականացված բռնությունների դեպքում արդյունավետ հետաքննության կարևորությունը և անդամ պետության կողմից բոլոր ողջամիտ քայլերը ձեռնարկելու պարտականությունը պարզելու համար, թե արդյոք էթնիկական ատելությունը կամ նախապաշարումը դերակատարում են ունեցել այդ իրադարձություններում:

Քանի դեռ ՄԻԵԴ-ը չի պահանջել ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ հատուկ օրենսդրության ներդնում, այն բացահայտ կերպով ընդունում է, որ ատելության հիմքով հանցագործությունները պետք է ստանան քրեական արդարադատության արձագանքը՝ պատճառված վնասներին համարժեք: Այսպիսով, *Սեչիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Secic v. Croatia*] (դիմում թիվ 40116/02) 2007թ. մայիսի 31, կետ 66) գործում ՄԻԵԴԸ հիշեցրել է, որ

*«... Բռնության միջադեպերը հետաքննելիս պետական իշխանություններն ունեն լրացուցիչ պարտականություն ձեռնարկելու բոլոր ողջամիտ քայլերը ռասիստական դրդապատճառները բացահայտելու համար և պարզելու, թե արդյոք էթնիկական ատելությունը կամ նախապաշարումները կարող էին դերակատարում ունենալ այդ իրադարձությունների ժամանակ: Այս պարտականության չկատարումը և ռասայական դրդապատճառներով բռնությունների և դաժանությունների նկատմամբ առանց ռասայական հիմքի գործերի նման վերաբերմունքի ցուցաբերումը նշանակում է այք փակել առանձնահատուկ բնույթի գործողությունների վրա, որոնք հատկապես կործանարար են հիմնարար իրավունքների համար»:*

Որոշակի հատկանիշների ցանկը կարող է տարբեր լինել տարբեր երկրներում, սակայն ՄԻԵԴ-ը չի պարտավորվում ներպետական նախադեպային իրավունքով և օրենսդրությամբ: Օրինակ՝ ԼԳԵՓ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների զոհերն իրենց իրավունքները վերականգնում են ՄԻԵԴ-ի միջոցով, երբ իրենց ներպետական օրենսդրությունները սեռական կողմնորոշումը չեն ընդունել որպես խտրականության արգելված հիմք:

*« Ատելության հիմքով հանցագործությունը» կամ «կանխակալ հանցագործություն» եզրույթները, հետևաբար, ավելի շուտ նկարագրում են հանցագործության տեսակ,*

*քան որոշակի հանցանք քրեական օրենսգրքի շրջանակներում: Ատելության հիմքով հանցագործություն հնարավոր է իրականացնել մի երկրում, ուր չկա որոշակի քրեական պատժամիջոց կանխակալության կամ նախապաշարումների դեմ: Եզրույթն ավելի շուտ ներկայացնում է հասկացություն, քան տալիս իրավական սահմանում»:*

(տե՛ս, [Hate Crime Laws: A Practical Guide](#) Հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺԻՄԻԳ) կողմից [www.osce.org/odihr](http://www.osce.org/odihr))

[Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքը](#) ատելության քարոզումը քրեականացնում է 226-րդ հոդվածով, որը ներառում է ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ, որոնց համար օրենսգրքը սահմանում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի՝ երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով: Իսկ եթե նույն գործողությունները ուղեկցվել են հրապարակայնորեն կամ լրատվական միջոցների օգտագործումով, բռնություն գործադրելով կամ դրա գործադրման սպառնալիքով կամ պաշտոնական դիրքի չարաշահումով, ինչպես նաև կազմակերպված խմբի կողմից, պատժվում է ազատազրկմամբ երեքից վեց տարի ժամկետով: Բացի այդ, բազմաթիվ այլ հանցագործությունների համար նշված հիմքերի զուգորդումը ծանրացնող հանգամանք է: Օրինակ, եթե սպանությունը կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, ապա վերջիններս նկատելիորեն բարձրացնում են արարքի հանրային վտանգավորությունը, որն էլ խստացնում է պատժաչափը:

#### **4. Թիվ 12 Արձանագրություն՝ կապը 14-րդ հոդվածի հետ և կիրառումը**

Թիվ 12 Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2010թ. նոյեմբերին այն վավերացրած 18 երկրներում: Հայաստանի Հանրապետությունը այս արձանագրությունը վավերացրել է 2014թ. դեկտեմբերի 17-ին: Արձանագրությունը պաշտպանությունն ավելի շուտ ընդլայնում է անդամ պետության կողմից «սահմանված ցանկացած իրավունքից օգտվելու» վրա, քան ուղղակի Կոնվենցիայում նշված իրավունքների: Թիվ 12 Արձանագրությունը ստեղծում է ինքնուրույն իրավունք: Ի տարբերություն 14-րդ հոդվածի՝ այն կախված չի Կոնվենցիայի մեկ այլ իրավունքի հետ միջամտության

հաստատումից: Երբ թիվ 12 Արձանագրության հիմնական նպատակը՝ խտրականության ընդհանուր արգելումը, բավականին արմատական է, դժվար է նախապես կանխատեսել, թե որքանով այդ փաստաթուղթն արդյունավետ կդառնա:

*Սեյդիչը և Ֆինչին ընդդեմ Բոսնիայի և Հերցոգովինայի* [[Sejdić and Finci v. Bosnia and Herzegovina](#)] (Դիմում թիվ 27996/06 և 34836/06, 2009թ. դեկտեմբերի 22), գործում ՄԻԵԴ-ի Մեծ պալատը գտավ, որ տեղի է ունեցել միաժամանակ 14-րդ հոդվածի և թիվ 12 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որ սահմանադրական դրույթներն երեք «բաղկացուցիչ ժողովրդներից» (բոսնիացիներ, խորվաթներ կամ սերբեր) բացի այլ անձանց արգելում էին իրենց թեկնածությունները ներկայացնել Բոսնիայի և Հերցոգովինային խորհրդարանի և նախագահության ընտրություններին: Այս միջոցը հատկապես խախտել էր հրեա և գնչու դիմումատուների իրավունքները: